

Բ Ա Ղ Դ Ա Ս Ա Ր

(Անատոլ Ֆրանսի)

I

Այդ ժամանակներում, Բաղդասար, որին յոյներն անուանում էին Սարասէն, թագաւորում էր Եթովպիայի մէջ։ Նա սեւամորթ էր, բայց դէմքով գեղեցիկ։ Պարզամիտ էր ու վեհանձն։ Նա իր թագաւորութեան երրորդ տարուայ մէջ, երբ քսաներկու տարեկան էր, այցելութեան գնաց Սաբայի թագունուն՝ Բալքիսի։ Սամբոբիտիս մոզը և Մանքերա ներքինին նրան ընկերակցում էին։ Նրա կարաւանը բաղկանում էր եօթանասուն և հինգ ուղտից որոնք բեռնաւորուած էին կինամոնով, զմուռսով, ոսկու փոշիով և փղոսկրով։ Ուղևորութեան ժամանակ, Սամբոբիտիսը նրան բացատրում էր և՛ մոլորակներէ ազդեցութիւնը, և՛ թանգազին քարերի յատկութիւնը ու Մանքերան երգում էր նրա համար կրօնական, ծիսական մեղեդիներ։ Բայց Բաղդասարը նրանց չէր լսում և զուարճանում էր հեռուն, սարերի վրայ, ականջները ցցած՝ պզգոյ փոքրիկ շնագայլներին դիտելով։

Վերջապէս, տասներկու օրուայ ճանապարհորդութիւնից յետոյ, Բաղդասար և իր ընկերները վարդի մի բուրմունք ըզգացին և շուտով տեսան Սաբա քաղաքի շուրջը սփռուող պարտէզները։

Այնտեղ, հանդիպեցին մանկամարդ աղջիկների որ պարում էին ծաղկած նոնենիների տակ։

— Պարը՝ մի աղօթք է ասաց Սամբոբիտիս մոզը։

— Մեծ արժէքով կարելի էր ծախել այս կիներին, ասաց Մանքերա ներքինին։

Քաղաք մտած լինելով՝ նրանք հիացած մնացին մեծ մագաղինների սայլատների և ատաղձատների, ինչպէս և այն մեծաքանակ ապրանքների առաջ որ դիզուած էին նրանց մէջ։ Երկար քայլեցին, սայլակներով, բեռնակրներով, էշերով և ի-

շապաններով լիքը փողոցներից և յանկարծ երևեցան Բալքիսի պալատի մարմարեայ պարիսպները, ծիրանի վրանները, ոսկեզօծ գմբեթները:

Սաբայի Թագուհին նրանց ընդունեց մի բազի մէջ ուր անուշահոտ ջրի շատրուաններ զովութիւն էին սփռում. և իրանց մարգարտանման շիթերով մի յստակ մրմունջ էին յարուցանում: Կանգուն, մի ականակուռ շրջագեցստ հագած՝ Թագուհին ժպտում էր:

Բաղդասար՝ դրան տեսնելով՝ մեծապէս վրդովուեց: Թագուհին՝ նրան երազից աւելի քաղցր և ցանկութիւնից աւելի գեղեցիկ թուաց:

— Տէր, կամաց մըմնջեց նրան Սամրոբիտիս, աշխատեցէք Թագուհուն հետ առևտրական մի լաւ դաշինք կնքելու:

— Զգուշացէք, տէր, աւելացրեց Մանքերա: Ասում են թէ նա կախարդանք է գործ դնում մարդկանցից սիրուելու համար:

Յետոյ, երկրպագութիւն անելով՝ մոգն ու ներքինին հեռացան:

Բաղդասար, Բալքիսի հետ միայնակ մնալով՝ փորձեց խօսել, բաց արեց բերանը, բայց մի բառ անգամ չկարողացաւ արտասանել: Նա մտածեց. «Թագուհին իմ լուութիւնից պէտք է զայրանայ»:

Այնուամենայնիւ Թագուհին դեռ ևս ժպտում էր և բարկացած երևոյթ չուներ:

Առաջինը նա խօսեց և ամենաքնքուշ երաժշտութիւնից աւելի քաղցր ձայնով ասաց.

— Թող ձեր գալուստը բարի լինի և նստէք ինձ մօտ:

Եւ մի մատով, որ ասես սպիտակ լոյսի մի ճառագայթ լինէր, նա ցոյց տուեց ծիրանի բարձեր որ զետեղուած էին գետնի վրայ:

Բաղդասարը նստեց, մի մեծ հառաչանք արձակեց և իւրաքանչիւր ձեռքով մի-մի բարձ խլելով իսկոյն գոչեց.

— Տիկին, ես ցանկանում էի, որ այս երկու բարձերը ձեզ թշնամի երկու հսկաներ լինէին: Որովհետեւ ես նրանց վիզը կ'որրէի:

Ու, այսպէս խօսելով՝ նա բռունցքի մէջ այնքան ուժգին սեղմեց բարձերը, որ կերպասը պատառ-պատառ եղաւ և նրանցից դուրս թաւ սպիտակ աղուամազերի մի ամպ - Փոքրիկ փետուրներից մինը, պահ մի թռչկոտեցաւ օդի մէջ, յետոյ եկաւ հանգչեց Թագուհու ծոցում:

—Տէր Բաղդասար, ասաց Բալքիս կարմրելով՝ ինչու համար ուզում էք հսկաներ սպանել:

—Որովհետև ձեզ սիրում եմ, պատասխանեց Բաղդասար:

—Ասացէ՛ք ինձ, հարցրեց Բալքիս, արդեօք ձեր մայրաքաղաքի հորերի ջուրը լմւ է:

—Այո՛ պատասխանեց Բաղդասար, դարմացած:

—Ես հետաքրքիր էի նոյնպէս իմանալու, շարունակեց Բալքիս, թէ ի՞նչպէս են պատրաստում չոր քաղցրաւենիքները (confiture) Եթովպիոյ մէջ:

Թագաւորը չգիտէր ինչ պատասխանելու՝ նա ստիպեց.

—Ասացէ՛ք, ասացէ՛ք ինձ հաճոյք պատճառելու համար:

Այն ժամանակ նա յիշողութեան մի մեծ ճիգ արեց և նըկարագրեց եթովպացի խոհարարներին՝ մեղրով սերկեկի պատրաստելու եղանակները: Բայց Թագուհին նրան չէր լսում: Յանկարծ նա ընդմիջեց.

—Տէր, ասում են, թէ դուք սիրում էք Կանդաս Թագուհուն, ձեր դրացուհուն: Ինձ մի խաբէ՛ք. նա ինձնից աւելի գեղեցիկ է:

—Աւելի գեղեցիկ, տիկին, գոչեց Բաղդասար Բալքիսի ոտքն ընկնելով, միթէ կարելի է...

Թագուհին շարունակեց.

—Իսկ նրա աչքերը, նրա բերանը, նրա մոյնը, նրա կողմերը... Բաղդասար բազումները տարածեց դէպի նա և աղաղակեց.

—Թոյլ տուէ՛ք վերցնել այն փոքրիկ փետուրը, որ հանգչել է ձեր պարանոցի վրայ և ես ձեզ կը բաշխեմ իմ Թագաւորութեան կէսը, Սամբուրիտիս մոգի և Մանքերա ներքինիի հետ:

Բայց նա վեր կեցաւ և ծիծաղելով փախաւ մի յստակ քրքիջ արձակելով:

Երբ մոգն ու ներքինին ներս մտան, իրանց տիրոջ գտան մտածմունքի մէջ ընկղմած ինչ որ նրա համար շատ անսովոր բան էր:

—Տէր, գուցէ անկարող եղաք առևտրական մի լաւ դաշինք կնքելու, հարցրեց Սամբուրիտիս:

Այդ օրը Բաղդասար Սաբայի Թագուհու հետ ընթրեց և արմաւի դինի խմեց:

—Ճիշտ է, ասաց նրան Բալքիս, ընթրիքի ժամանակ, որ Կանդաս Թագուհին ինձչափ գեղեցիկ չէ:

—Կանդաս Թագուհին սեւամորթ է, պատասխանեց Բաղդասար:

Բալքիս՝ յանկարծակի նայեց Բաղդասարին և ասաց.

— Մարդ կարող է սևամորթ լինել, առանց տգեղ լինելու:

— Բալքիս, աղաղակեց Թագաւորը...

Աւելի չխօսեց: Նրան իր բազուկներէ մէջ առնելով՝ կռնակի վրայ պառկած պահում էր Թագուհու ճակատը իր շրթներէ տակ, բայց տեսաւ որ նա լալիս էր: Այն ժամանակ նրան խօսեց շատ ցածր փայփայող ձայնով մի քիչ երգելով, ինչպէս անում են ստնդուները: Նրան իր փոքրիկ ծաղիկը, իր փոքրիկ աստղը անուանեց:

— Ինչո՞ւ լաց էք լինում, ասաց նրան: Եւ ինչ պէտք է անել որպէսզի էլ դուք չլաք: Եթէ մի բանի փափագում էք, յայտնեցէք ինձ ձեր ցանկութիւնը և ես կը կատարեմ:

Նա չէր լաց լինում այլևս և մնում էր մտածկոտ: Նա երկար պնդեց որ իր փափագը յայտնէ:

Վերջապէս նա խօսեց.

— Ես վախենալ կ'ուզէի:

Որովհետեւ Բաղդասար չհասկացած լինելու երեոյթ ունէր, նա բացատրեց որ երկար ժամանակից ի վեր նա ցանկանում էր մի անծանօթ վտանգի ենթարկուել, բայց չէր կարողանում, որովհետեւ Սաբայի մարդիկն ու աստուածները հսկում էին նրա վրայ:

— Այնուամենայնիւ, աւելացրեց ժպտալով, ես ցանկանում էի, գիշեր ժամանակ, սարսափի զմայլելի ցրտին իմ մօտ մէջ Թափանցելն զգալ: Ես ցանկանում էի իմ մագերի ցից ցից տնկուելն զգալ իմ գլխի վրայ: Օհ, այնքան լաւ է վախենալը:

Նա իր բազուկներն անցկացրեց սևամորթ Թագաւորի վզի շուրջը և պաղատող երեխայի ձայնով ասաց.

— Ահա գիշերը վրայ հասաւ: Երկուսս միասին ծպտուած գնանք ման գանք քաղաքի մէջ: Ուզում էք:

Հաւանեց: Թագուհին անմիջապէս վագեց դէպի պատուհանը և ծուռերի ճիւղերի միջից դիտեց հասարակաց հրապարակը:

— Մի մուրացիկ, ասաց նա, պառկել է պալատի պատի տակ: Տուէք նրան ձեր հագուստները և փոխարէնը պահանջեցէք նրա ուղտի մորթից շինուած գլխի փաթեթոցը (turban) և այն կոշտ կտաւեղէնը որ իր մէջքն է կապում: Շուտ արէք, ես գնում եմ պատրաստուելու:

Ու խնջոյքի սրահից դուրս վագեց ցնծութիւնից ծափահարելով:

Բաղդասար իր ոսկեհոռ, վշեայ պատմուճանը տուաւ մուրացիկին և առաւ նրա փաթեթոցն ու սպածանիկին: Նա այդ-

պէս մի ճշմարիտ ստորուկի կերպարանքն ունէր: Թագուհին անմիջապէս երևեցաւ: Նա հագել էր այն առանց կարի կապոյտ շրջագգեստը, որ դաշտում աշխատող կիներն էին կրում:

— Գնանք, ասաց նա:

Ու նեղ նրբանցքներից, նա քաշ արեց Բաղդասարին, մինչև մի փոքրիկ դուռ որ բացւում էր դաշտերի վրայ:

II

Մութ գիշեր էր: Բալքիսը գիշերուայ մէջ բոլորովին փոքրիկ էր երևում: Նա Բաղդասարին առաջնորդեց այն գինե-տներից մինը, ուր հաւաքւում էին գողերն և քաղաքի բռնա-կիրները պոռնիկների հետ: Գինետնում, երկուար միասին մի սեղանի առաջ նստելով՝ կեղտոտ լամպի աղօտ լոյսի տակ, ա-պականուած մթնոլորտում տեսան դարշահոտ անբանները, որ մի կնոջ կամ մի բաժակ ոգելից ըմպելիքի համար իրարու խը-փում էին բոռնցքով կամ դանակով: Ուրիշները՝ խռմփում էին սեղանների տակ ընկած, բռռնցքները սեղմած: Գինեպա-նը, պարկերի մի դէղի վրայ պառկած՝ խոհեմաբար, աչքի ծայրով արբեցողների արեւնալից կռիւն էր դիտում:

Բալքիս, առաստաղի գերաններից կախ արած աղած ձուկեր նշմարելով ասաց իր ընկերոջ.

— Ես կամենում էի այդ ձկներից մինն ուտել ջարդուած սոխով:

Բաղդասար բերել տուաւ ձուկը: Երբ նա կերաւ, Բաղ-դասար նկատեց որ հետը դրամ վերցրած չէր: Ոչինչ, մտա-ծեց նա, առանց վճարելու կը մեկնենք: Բայց գինեպանը դրանց օձիքից բռնեց, կեղտոտ հայհոյանքներ՝ Թափելով նրանց գլխին: Բաղդասար բռռնցքի մի հարուածով դետին զուեց նրան: Բաղմաթիւ արբեցողներ՝ սուրը մերկացրած յար-ձակուեցին այն ժամանակ երկու անծանօթների վրայ: Բայց սևամորթը՝ եղիպտական սոխեր մանրելու ծառայող մի անա-գին ցուպով զինուած լինելով, յարձակուողների երկուսին գե-տին տապալեց և հարկադրեց միւսներին նահանջելու: Նա՝ վա-խից իր մօտ ապաստանող Բալքիսի մարմնի տաքութիւնն էր զգում. և դրա համար էլ անյաղթելի էր: Գինեպանի բարեկամ-ները, այլևս չհամարձակուելով նրան մօտենալ, խանութի կտրից նրա վրայ կարկտի նման Թափեցին իւղի կարասներ, անագեայ Թասեր, վառուած լամբեր, և մինչև անգամ բրոն-զեայ խոշոր պտուկը, ուր եփւում էր մի ամբողջ ոչխար: Այդ պտուկը մի սասափելի ժխորով ընկաւ Բաղդասարի գլխի վրայ:

և նրա գանգը ճեղքեց: Նա մի վայրկեան շշկլուած մնաց, ապա իր ուժերը հաւաքելով պտուկը այնպիսի ուժգնութեամբ նետեց դէպի հակառակորդները որ բաղխումի շառաչին խառնուեցին անօրինակ ոռնումներ, և հոգեվարքի հոնդիւններ: Կենդանի մնացածների սարսափից օգտուելով և վախճալով որ մի գուցէ Բալքիսը վերաւորուի, նրան իր բաղուկների մէջ առաւ և փախաւ մութ ու ամայի փողոցներից:

Գիշերուայ լուսթիւնը պատում էր երկիրը և փախստականները՝ իրանց ետև, արբեցողների և ըստ բաղդի նրանց հալածող կիների աղաղակների հետըզհետէ նուազումը լսում էին: Շուտով նրանք Բաղդասարի ճակատից՝ Բալքիսի պալանոցի վրայ ընկնող արեան կաթիլների թեթև չփչփոցը միայն լսեցին:

— Սիրում եմ քեզ մըմնջեց թագուհին:

Ու լուսինը՝ մի ամպի ետևից դուրս գալով՝ թագաւորը Բալքիսի կիսախուփ աչքերի մէջ, արցունքի մի սպիտակ ու փալիւրուն շիթ նշմարեց: Նրանք վայր էին իջնում մի չորացած հեղեղի անկողնուց: Յանկարծ Բաղդասարի ոտքը սահեց: Գիրկընդխառն նրանք վայր ընկան: Նրանց թուաց, որ խորասուզում էին մի զմայելի անէութեան մէջ և ապրող աշխարհը դադարեց այլևս նրանց համար գոյութիւն ունենալուց: Նրանք ըմբռնում էին դեռևս ժամանակի, թուի և տարածութեան թովիչ մոռացումը, երբ, արշալոյսին՝ վիթերը եկան իրանց ծառան անցնել ժայռերի խոռոչներում հաւաքուած ջրից:

Այդ պահին, անցնող աւազակները մարգագետնի վրայ պառկած երկու սիրահարներին տեսան:

— Խեղճ, աղքատ են, ասացին աւազակները, բայց մենք նրանց մեծ դնով կը ծախենք, որովհետև երիտասարդ են և գեղեցիկ:

Ու այս ասելով մօտեցան նրանց, կապկպեցին ու մի էշի պոչին կապելով իրանց ճամբան շարունակեցին:

Սեւամորթը՝ շղթայակապ, աւազակների դէմ մահուան ըսպառնալիքներ էր կարդում: Բայց Բալքիսը՝ առաւօտեան զով օդի մէջ սարսուռով մի ինչ որ անտեսանելի բանի ժպտում էր կարծես:

Սարսափելի լուռ տեղերից անցկացան մինչև որ արեգակի ջերմութիւնը զգալի եղաւ: Արևը շատ էր բարձրացել արդէն, երբ աւազակներն իրանց բանտարկեալների կապանքները քակելով, մի ժայռի ստուերի տակ, իրանց մօտ նստեցրին, նրանց առաջ մի քիչ մլտած հաց գցեցին, որը Բաղդասար

արհամարհանքով մերժեց վերցնել, բայց Բալքիս ազահարար կերպով:

Թագուհին ծիծաղում էր: Եւ երբ աւազակների պետը նըրան հարցրեց. թէ ինչո՞ւ համար էր ծիծաղում.

— Ծիծաղում եմ, պատասխանեց, մտածելով՝ որ ձեզ ամենքիդ պէտք է կախել տամ:

— Իրմէ, բացազանչեց աւազակապետը, ահաւասիկ մի տարօրինակ խօսք քեզ նման մի թաթախամաններ լուացողի համար, նոնողանկա՛ Անկասկած քու խափշիկ սիրահարիդ ձեռքով է որ մեզ ամենքիս կախել պիտի տաս չէ՞:

Երբ այս նախատական խօսքերը լսեց, Բաղդասար սարսափելի զայրոյթի մէջ ընկաւ և աւազակի վրայ խոյանալով նրա վիզն այնպէս ուժգին սեղմեց որ մազ մնաց խեղդէր:

Բայց աւազակը՝ իր դանակը մինչև կոթը խրեց նրա փորի մէջ: Խեղճ թագաւորը գետին թաւալելով՝ մի օրհասական հայեացք գցեց Բալքիսի վրայ և աչքերը փակեց:

III

Նոյն պահին, մարդիկների, ձիերի և զէնքերի մի մեծ ժխոր լսուեց և Բալքիս ճանաչեց քաջ Աբններին, որ իր զօրախըմբի գլուխն անցած՝ եկել էր իր թագուհուն ազատելու, որի խորհրդաւոր անյայտացումը նախորդ երեկոյից իմացել էր արդէն:

Նա երեք անգամ Բալքիսի առաջ երկրպագեց և հրամայեց իր մարդկանց, որ թագուհու համար պատրաստուած զահաւորակը նրա մօտ տանեն: Զինուորները՝ աւազակների ձեռքերը կապոտում էին: Թագուհին դարձաւ դէպի աւազակապետը և քաղցրութեամբ ասաց.

— Դուք ինձ չէք մեղադրեր անշուշտ, բարեկամս, թէ ձեզ մի դատարկ խոստում արի, երբ ասացի որ դուք կախաղան պիտի բարձրանայիք:

Սամբուրիտիս մոզն ու Մանքերա ներքինին, որ Աբնների կողքին կանգնել էին մեծ աղաղակներ արձակեցին, երբ իրանց իշխանին տեսան անշարժ գետնի վրայ տարածուած՝ մի դանակ փորի մէջ մխուած: Զգուշութեամբ նրան բարձրացրին: Սամբուրիտիս, որ բժշկական արուեստի մէջ վարպետ էր, նըկատեց որ նա դեռ ևս շնչում էր: Մինչդեռ ինքն զբաղուեց վերքերը շտապով կապելով՝ Մանքերա թագաւորի բերանի փրփուրներն էր սրբում: Յետոյ նրանք Բաղդասարին ամրացը-

բին մի ձիու վրայ և յամբօրէն առաջնորդեցին Թագունու պալատը:

Բաղդասար՝ ամբողջ տասնևհինգ օր բուռն զառանցանքի մէջ անցկացրեց: Նա անդադար խօսում էր եռ եկող պտուկի, հեղեղի բաց արած ճանապարհի մէջ աճած մասուռի մասին և Բալքիսին էր կոչում բարձրաձայն: Վերջապէս, տասնևվեցերորդ օրուայ մէջ, աչքերը բանալով իր սնարի մօտ տեսաւ Սամբուրիտիսին և Մանքերային, բայց Թագունուն չտեսաւ:

—Ո՛ւր է, թէնչ է անում Թագունին:

—Տէր, պատասխանեց Մանքերա, նա Կոմսօթենի Թագաւորի հետ փակուած է մի սենեակում:

—Անտարակոյս, նրանք համաձայնութիւն են կայացնում ապրանքներ փոխանակելու համար, աւելացրեց իմաստուն Սամբուրիտիսը: Բայց դուք մի վրդովուէք, տէր, որովհետեւ ձեր տենդը կարող է սաստկանալ:

—Ես ուզում եմ նրան տեսնել, գոչեց Բաղդասար:

Եւ նա խոյացաւ դէպի Թագունու առանձնասենեակը ու ծեղրունին և ներքինին անկարող գտնուեցին նրան արգելելու: Ննջասենեակի մօտ հասնելով՝ նա Կամոթենի Թագաւորին տեսաւ, որ ոսկու տակ արեգակի նման փայլփլուն դուրս էր գալիս այնտեղից:

Բալքիս՝ մի ծիրանի անկողնու վրայ տարածուած՝ աչքերը փակ ժպտում էր:

—Իմ Բալքիս, իմ Բալքիս աղաղակեց Բաղդասար:

Բայց նա իր գլուխը չէր դարձնում և թւում էր թէ խորասուզուած է մի երկար երազի մէջ:

Բաղդասար նրան մօտեցաւ և բռնեց նրա մի ձեռքը, որը նա իսկոյն քաշեց:

—Ի՞նչ էք ուզում ինձանից, ասաց նա:

—Դուք հարցնում էք, պատասխանեց սեւամորթ Թագաւորը արտասուքների մէջ պայթելով:

Նա դարձրեց դէպի Բաղդասարը իր խաղաղ ու խստահայեաց աչքերը:

Բաղդասարը հասկացաւ որ նա ամեն բան մոռացել էր և նրբան յիշեցրեց հեղեղի անկողնու մէջ անցկացրած դիշերը: Բայց նա.

—Ես չգիտեմ, ճշմարիտը, թէնչ էք ուզում ասել, Տէր: Երեւի անպատճառ դուք երազում էք:

—Ի՞նչ, աղաղակեց դժբախտ իշխանը բազումները գալաբելով, քո համբոյրները և այն դանակը, որի հետքերը պահել եմ, երազներ են արդեօք...

Նա վեր կացաւ. նրա շրջազգեստի ակունքը կարկուտի նըման աղմուկ բարձրացրին և փայլակներ արձակեցին:

— Տէր, ասաց, ահաւասիկ ժամը, ուր ես իմ նախարարների հետ խորհրդի պէտք է նստեմ: Ես ձեր հիւանդ ուղեղի երազները լուսաբանելու աւելորդ ժամանակ չունիմ: Հանգստացէք: Մնաք բարեհաւ:

Բաղդասար՝ կթոտելով՝ մեծ ճիգ գործ դրաւ այդ չար կնոջից իր տկարութիւնը ծածկելու համար. վազեց իր սենեակը և ուշաթափ ընկաւ, որովհետեւ նրա վէրքը բացուել էր:

IV

Նա երեք շաբաթ մնաց անզգայ, որպէս մեռել. յետոյ քրտանեկորդ օրը ուշքի գալով՝ Սամբուրիտիսի ձեռքից բռնեց, որը Մանքերայի հետ հսկում էր իր վրայ և լալազին գոչեց.

— Օհ, բարեկամներս, սրբան երջանիկ էք դուք երկուսդ, որովհետեւ ձեզնից մինը ծերունի է իսկ միւսը նման ծերունի... Բայց ոչ, աշխարհում երջանկութիւն չկայ և ամեն ինչ վատ է երկրի վրայ, քանի որ սէրը մի չարիք է և Բալքիսը չար:

— Իմաստութիւնն է մարդուն բախտաւորացնում, պատասխանեց Սամբուրիտիս:

— Ես ցանկանում եմ փորձել, ասաց Բաղդասար: Օհ, ճանապարհ ընկնենք շուտով դէպի Նթովպիա: Եւ որովհետեւ նա իր սիրածին կորցրել էր, վճռեց նուիրուել իմաստութեան և դառնալ մոգ. Եթէ այդ որոշումը նրան ոչ մի հաճոյք չէր պատճառում, գոնէ մի փոքր խաղաղութիւն կը պարգևէր: Ամեն երեկոյ, Սամբուրիտիս մոգի և Մանքերա ներքինիի հետ իր պալատի պատշգամբում նստած՝ հորիզոնում երևացող անշարժ արմաւենիներն էր դիտում և կամ լուսնի լուսով՝ ծառի կոճղերի նման՝ Նեղոսի վրայ ծածանող կոկորդիլոսներին էր դիտում:

— Բնութիւնը դիտելով մարդ երբէք չի կշտանում, ասում էր Սամբուրիտիս:

— Անտարակոյս, պատասխանում էր Բաղդասար: Բայց բնութեան մէջ կայ մի բան արմաւենիներից և կոկորդիլոսներից աւելի գեղեցիկ:

Այդպէս էր խօսում որովհետեւ միտքն էր ընկնում Բալքիսը: Եւ Սամբուրիտիս, որ ծերացել էր, ասում էր.

— Նեղոսի աճումի երևոյթը կայ որ հիանալի է և որը ես բացատրեցի: Մարդ աշխարհ եկած է հասկանալու համար:

— Նա ծնած է սիրելու համար պատասխանում էր Բաղդասար հառաչելով՝ Կան բաներ, որ չեն բացատրուի:

— Ուրո՞նք են այդ բաները, հարցրեց Սամբուրիտիս:

— Մի կոշ մատնութիւնը, պատասխանեց Թադաւորը:

Այնուամենայնիւ Բաղդասար՝ վճռած լինելով մոգ դառնալ, կառուցանել տուաւ մի աշտարակ որի բարձրութիւնից տեսնում էր բազմաթիւ Թադաւորութիւններ և երկնքի ամբողջ տարածութիւնը: Այդ աշտարակը աղիւսից էր և միւս բոլոր աշտարակներից բարձր էր: Երկու տարուց պակաս ժամանակի մէջ չընտեց և Բաղդասար նրան կառուցանելու համար իր հօր արքայական ամբողջ հարստութիւնը ծախսել էր: Ամեն գիշեր այդ աշտարակի կատարն էր բարձրանում և, այնտեղ, իմաստուն Սամբուրիտիսի հսկողութեան տակ զննում էր երկինքը:

— Երկնքի պատկերները մեր ճակատագրերի նշաններն են, նրան ասում էր Սամբուրիտիս:

— Պէտք է նրանց ճանչնալ, այդ նշանները մութ են: Բայց, մինչդեռ ես նրանց ուսումնասիրում եմ, ես չեմ խորհում Բալքիսի վրայ և այդ մի մեծ առաւելութիւն է:

Մոգը նրան ուսուցանում էր, բացի այլ օգտակար ճշմարտութիւններից՝ գիտենալ որ աստղերը, գամերի պէս, երկնակամարի վրայ հաստատուած են և որ հինգ մոլորակներ կան, օրինակ, Բել, Մերուտախ, Նեքօ, որ արու են, Միւն և Միւլտա, որ էգ են:

— Արծաթը, նրան ասում էր դարձեալ, համապատասխանում է Սիւնի, որ լուսինն է, երկաթը Մերուտախի, անագը Բելի:

Եւ բարի Բաղդասարը ասում էր.

— Ահա այն գիտութիւնները, որոնց ես ուզում եմ ստանալ: Մինչդեռ ես ուսումնասիրում եմ աստղաբաշխութիւնը, աշխարհի վրայ ոչ մի բան, ոչ իսկ Բալքիսի վրայ եմ խորհում: Գիտութիւնները բարեբար են, նրանք արգելում են մարդոց խորհել: Սամբուրիտիս, սովորեցրո՛ւ ինձ այն գիտութիւնները որոնք մարդոց մէջ ջնջում են զգացումը, և ես քեզ ձեռքի վրայ ման ածել կը տամ իմ Ժողովրդի մէջ:

Ահա ինչու համար Սամբուրիտիս Թադաւորին սովորեցրեց իմաստութիւնը:

Դ՛ Աստրամպսիկոսի, Գորբիառի և Պաղատասի սկզբունքների համեմատ նրան սովորեցրեց apotées magique-ը՝ Բաղդասար՝ որչափ աւելի շատ էր զննում արեգակի տասներկու տները (maisons), այնքան աւելի նուազ էր մտածում Բալքիսի մասին:

Մանքերա երբ այդ նկատեց, մեծ ուրախութիւն զգաց։
— Խոստովանեցէք, տէր, ասաց նա մի օր, որ Բալքիա
թագուհին իր ոսկեհոռու շրջագգեստի տակ թագցնում էր իր
ոտները որ այծի ոտների նման կճղակաւոր էին։

— Ո՞վ պատմեց քեզ այդ տեսակ յիմարութիւններ, հար-
ցըրեց թագաւորը։

— Ամենքի կարծիքն է այդ, տէր, և՛ Սաբայում և Նեով-
պիայում, պատասխանեց ներքինին։ Ամեն մարդ պարզօրէն
ասում է որ Բալքիա թագուհու սրունքը մազոտ է և ոտքերը
երկու սև եղջիւրներից շինուած։

Բաղդասար ուսերը ցնցեց։ Նա գիտէր, որ Բալքիսի սը-
րունքներն ու ոտքերը ուրիշ կանանց սրունքների և ոտների
նման էին և կատարելապէս գեղեցիկ։ Այնուհանդերձ այդ միտ-
քը փչացրեց յիշողութիւնը նրան՝ որին այնքան սիրել էր։
Կարծես Բաղդասար՝ մեղադրելիս լինէր Բալքիսին նրա հա-
մար, որ իր գեղեցկութիւնը՝ իրան տնժանօթ անձերի երևա-
կայութեան մէջ անստգիւտ չէր։ Այն մտածումը, թէ նա վա-
յելել էր իրապէս մի բարեկամ կնոջ, որը ուրիշների կար-
ծիքով հրէշաւոր էր—նրան տխրեցրեց և նա այլևս չցան-
կաց տեսնել Բալքիսին։ Բաղդասարի հոգին պարզ էր թէ-
և, բայց սէրը միշտ մի բարդ զգացում է։

Այդ օրուանից սկսած՝ թագաւորը մեծ առաջադիմութիւն
արեց մոգութեան և աստղաբաշխութեան մէջ։ Նա չափազանց
ուշադիր էր աստղերի հանդիպումներին և նա նոյնքան ան-
սխալ աստղադէտ էր, որքան նոյնինքն իմաստուն Սամբոբի-
տիսը։

— Սամբոբիտիս, կարո՞ղ ես քո գլխով երաշխաւորել իմ
գուշակութիւնների ստուգութիւնը։

Եւ իմաստուն Սամբոբիտիսը պատասխանում էր։

— Տէր, գիտութիւնը անսխալ է, բայց գիտունները սխալ-
ւում են միշտ։

Բաղդասար մի բնական գեղեցիկ հանճար ունէր։ Նա ա-
սում էր։

— Ճշմարիտ է միայն այն ինչ աստուածային է։ Իսկ աս-
տուածայինը մեզանից պահուած է։ Մենք իզուր ենք փնտը-
ռում ճշմարտութիւնը։ Այնուամենայնիւ, ահա ես մի նոր աստղ
գտայ երկնքում։ Նա գեղեցիկ է ու կենդանի է թւում, երբ նա
շողշողում է ասես մի երկնային աչք լինի որ մեղմիւ քթթում
է։ Կարծես թէ նա ինձ կոչում է։ Երանի՛ր, երանի՛ր, երանի՛ր նը-
րան, որ այդ աստղի տակ կը ծնի։ Սամբոբիտիս, տես, ի՞նչ
հայեացք է գցում մեզ վրայ այդ հիանալի ու շքեղ աստղը։

Բայց Սամբուրիտի աստղը չտեսաւ, որովհետեւ չէր ուզում տեսնել: Գիտուն և ծեր՝ նա նորութիւնները չէր սիրում:

Ու Բաղդասար՝ գիշերուայ լուսթեան մէջ կրկնում էր միայնակ.

— Երանի՛ր, երանի՛ր, երանի՛ր նրան որ այդ աստղի տակ կը ծնի:

V

Արդ, ամբողջ Եթովպիայի և շրջակայ Թագաւորութիւններէ մէջ լուր տարածուեց, որ Բաղդասար Թագաւորը չէր սիրում այլևս Բալքիսին:

Երբ լուրը սաբացիների երկիրը հասաւ, Բալքիս զայրացաւ որպէս թէ նրան դաւաճանած լինէին: Վաղեց Կամոթենի Թագաւորի մօտ որ իր կայսրութիւնը մոռացել էր Սաբա քաղաքում և գոչեց.

— Բարեկամս, գիտէ՞ք ինչ նոր լուր հաղորդեցին ինձ — Բաղդասար այլևս ինձ չի սիրում:

— Ի՞նչ փոթի, ժպտազին պատասխանեց Կամոթենի Թագաւորը, քանի որ մենք սիրում ենք իրար:

— Բայց դժւոք չէ՞ք զգում այն նախատինքը որ այդ լսարձիկը անում է ինձ:

— Ո՛չ, պատասխանեց Կամոթենի Թագաւորը, ես չեմ ըզգում:

Բալքիս նրան խայտառակ կերպով վռնտեց և իր մեծ եպարքոսին հրամայեց, որպէսզի ամեն ինչ պատրաստէ Եթովպիա ճանապարհորդելու համար:

— Այս գիշեր իսկ պէտք է ճանապարհ ընկնենք, ասաց Թագուհին: Եթէ մինչև վերջալոյս ամեն ինչ պատրաստ չլինի կտրել կը տամ գլուխդ:

Յետոյ, երբ միայնակ մնաց, սկսեց հեծեծել:

— Ես նրան սիրում եմ: Նա ինձ չի սիրում այլևս, և ես նրան սիրում եմ, հառաչեց իր սրտի ը ոլոր անկեղծութեամբ:

Արդ, մի գիշեր, մինչդեռ իր աշտարակի վրայ էր բարձրացել հրաշագործ աստղը գտնելու համար, Բաղդասար՝ աչքերը խոնարհեցնելով դէպի երկիր, մի երկար սև գիծ տեսաւ որ հեռուն անապատի մէջ աւազների վրայ օճապտոյտ գալարւում էր ինչպէս մրջինների մի բանակ: Փոքրագիտը, ինչ որ մրջին էր թւում, մեծացաւ և ճշդուեց, ու Թագաւորը նըշմաբեց որ ձիեր, ուղտեր և փիղեր էին:

Կարաւանը քաղաքին մօտեցած լինելով՝ Բաղդասար՝

Սաբայի թագունու թիկնապահների փախիլուն, կեռ սուրերն ու սև ձիերին տեսաւ Բաղդասար ճանաչեց և Բալքիսին: Ու մի մեծ խռովք պատեց նրան: Զգաց որ նրան դարձեալ պիտի սիրէր: Աստղը՝ երկնակամարում մի հրաշալի փայլով փողփողում էր: Յածրում, Բալքիս՝ մի ծիրանեղարդ ու ոսկեքանդակ դահաւորակի մէջ պառկած՝ փոքրիկ ու փայլուն էր ինչպէս աստղը:

Բաղդասար՝ իրան ձգուած էր զգում դէպի նա՝ մի անզուսպ մղումով: Այնուամենայնիւ զլուխը նրանից դարձրեց մի գերազոյն ջանքով և աչքերը դէպի երկինք բարձրացնելով վեր ըստին տեսաւ աստղը:

Այն ժամանակ աստղը խօսեց ու ասաց.

«Փառք Աստծուն երկնքումը, երկրի վրայ խաղաղութիւն, և մարդկանց մեծ հաճութիւն:

«Վերցրիւ մի չափ զմուռս, բարեսիրտ արքայդ Բաղդասար և հետեւիր ինձ: Ես քեզ կ'առաջնորդեմ դէպի այն փոքրիկ երեխան, որ մի մսուրում ծնաւ էշին և եղին մէջտեղ:

«Ու այս փոքրիկ երեխան թագաւորների թագաւորն է: Նա պիտի մխիթարէ նրանց, որոնք պէտք ունէին սիրովանքի:

«Նա կանչում է քեզ դէպի իրան, ո՞վ դու, Բաղդասար, որի հոգին նոյնքան մոայլ է որքան դէմքը, բայց որի սիրտը պարզ է ինչպէս մի երեխայի սիրտը:

«Նա քեզ ընտրեց, որովհետեւ դու տառապեցիր, ու նա քեզ պիտի տայ հարստութիւնը, ուրախութիւնն ու սէրը:

«Նա քեզ կ'առէ. Հրճուելով հղիւր աղքատ. ահա դըրանումն է կայանում ճշմարիտ հարստութիւնը: Նա քեզ կ'առէ նոյնպէս. ճշմարիտ ուրախութիւնը, ուրախութիւնից հրաժարուելով մէջ է: Սիրիւր ինձ, և իմ մէջ միայն սիրիւր միւս արարածներին, որովհետեւ ես եմ միայն սէրը:»

Այս խօսքերից յետոյ, թագաւորի մոայլ դէմքի վրայ մի աստուածային խաղաղութիւն տարածուեց, որպէս լոյս:

Բաղդասար հիացած՝ մտիկ էր անում աստղին: Ու զգում էր որ մի նոր մարդ է դառնում: Սամբոբիտիս և Մանքերա՝ գետնամած երկրպագութիւն էին անում իր կողքին:

Բալքիս թագունին դիտում էր Բաղդասարին: Նա հասկացաւ, որ աստուածային սիրով լեցուած այդ սրտում այլևս սէր չէր կարող լինել երբէք իրան համար: Մոլեգնութիւնից տրժգունուեց և հրամայեց կարաւանին անմիջապէս վերադառնալ Սաբայի երկիրը:

Երբ աստղը դադարեց խօսելուց, թագաւորն և իր երկու ընկերները աշտարակից իջան: Յետոյ, մի չափ զմուռս պատը-

բաստելով՝ մի կարաւան սարքեցին և առաջ խաղացին աստղի առաջնորդութեամբ: Երկար ժամանակ նրանք ճանապարհորդեցին անձանօթ դաւառներով և աստղը քայլում էր միշտ նրանց առաջից:

Մի օր, երեք ճանապարհի մէջտեղ հասնելով՝ երկու թագաւորների տեսան, որ բազմաթիւ հետևորդներով գնում էին: Մինը երիտասարդ էր և սպիտակամորթ: Բաղդասարին ողջունեց նա և ասաց.

— Իմ անունն է Գասպար, ես թագաւորեմ և Հրէաստանի Բեթղեհեմ քաղաքում ծնուած երեխային ոսկի եմ ընծայ տանում:

Երկրորդ թագաւորը նոյնպէս մօտեցաւ: Մի ծերունի էր, որի սպիտակ մօրուքը ծածկում էր կուրծքը:

— Իմ անունս է Մելքոն, ասաց, ես թագաւոր եմ և խունկ եմ տանում այն աստուածային երեխային որ ծնուել է մարդկանց ճշմարտութիւնն ուսուցանելու համար:

— Ես էլ ձեզ նման նրա մօտ եմ գնում ասաց Բաղդասար. ես յաղթահարեցի իմ պակշտութիւնը, ահա ինչո՞ւ համար աստղը ինձ խօսեց:

— Ես, ասաց Մելքոն, յաղթահարեցի իմ հպարտութիւնը, ահա ինչո՞ւ համար կոչուեցի:

— Ես, ասաց Գասպար, յաղթահարեցի իմ անգթութիւնը, ահա ինչո՞ւ համար ձեզ հետ եմ գնում:

Ու երեք մօզերը միասին շարունակեցին իրանց ճանապարհը: Արևելքի աստղը առաջնորդում էր նրանց. նա հասնելով վերջապէս այն տեղի վրայ ուր ծնուել էր երեխան, կանգ առաւ:

Արդ, աստղի կանգ առնելը տեսնելով՝ նրանք սաստիկ հրճուեցին:

Եւ ներս մտնելով՝ երեխային գտան՝ իր մօր՝ Մարիամի հետ, և երկրպագելով պաշտեցին նրան: Ու, բաց անելով իրանց գանձերը, ընծայեցին ոսկի, խունկ և զմուռս ինչպէս ասուած է Աւետարանում:

Թարգմ. ֆրանսերէնից Տ. ԶԱԻԷՆ